Ամփոփաթերթ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների			
Առաջարկության հեղինակ	Առաջարկություն	Հեղինակի դիրքորոշում	Գլխադասային հանձնաժողովի որոշումը առաջարկի վերաբերյալ
Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 1-րդ հոդվածի 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը Սահմանադրական դատարանի անդամ նշանակված և սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակում իր պաշտոնավարումը շարունակած Սահմանադրական դատարանի դատավորի կողմից՝ սույն մասի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ երկամսյա ժամկետում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական ներկայացնելու դեպքում, հրաժարականի ընդունված համարվելու արդյունքում նրա լիազորությունները	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

	դադարելուց հետո մինչև իր համար Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը նա ստանում է կենսաթոշակ՝ հրաժարական ներկայացնելու օրվա դրությամբ հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:»:		
	2.Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել որպես 3-րդ մաս, իսկ 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ Օրենքի 88-րդ հոդվածում լրացվող 4.1-րդ մասի իրավակարգավորումը Սահմանադրական դատարանի դատավորի կողմից սահմանված ժամկետում հրաժարական ներկայացնելու մասով գործում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: